Նախագիծ
Երկրորդ ընթերցում

**Կ-298-26.09.2019,11.11.2019-ՏՀ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ֆիզիկական անձին կամ ուղղվում են ֆիզիկական անձի վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»:

*Հոդված 2.* Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 20-րդ կետով.

«20) բանկերի կամ վարկային կազմակերպությունների ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց կամ ուղղվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»:

*Հոդված 3.* Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 15-րդ կետով.

«15) բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով վճարված (փոխանցված) գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց կամ ուղղվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»:

*Հոդված 4.* Օրենսգրքի 124-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 124. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները

1. Ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի

համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները, ինչպես նաև կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով կրած կորուստների չափով:

2. Ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների համար հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ապահովագրական և վերաապահովագրական հատուցումները, ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով կատարվող ծախսերը:»:

*Հոդված 5.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստացված ապահովագրական հատուցումների նկատմամբ, բացառությամբ այն ապահովագրական հատուցումների, որոնց գծով հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջադրվել և սահմանված կարգով վճարվել են:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)147-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել~~լրացնել նոր 4.1-ին կետով.~~ Հետևյալ խմբագրությամբ.

«4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու~~,~~ և եթե գումարները բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ~~իսկ~~ տրամադրվում են ֆիզիկական անձին կամ~~ը՝~~ ~~ապահովադիր (այդ թվում, եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից անմիջապես~~ ուղղվում են ֆիզիկական անձի վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր).»:

*Հոդված 2.* ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:~~ Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 20-րդ կետով.

«20) բանկերի կամ վարկային կազմակերպությունների ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների

կողմից տրամադրվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց կամ ուղղվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 15-րդ կետով.

«15) բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով վճարված (փոխանցված) գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և  եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց կամ ուղղվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»:

***Հոդված 4***. Օրենսգրքի 124-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 124. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները

1. Ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները, ինչպես նաև կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով կրած կորուստների չափով:

2. Ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների համար հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ապահովագրական և վերաապահովագրական հատուցումները, ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով կատարվող ծախսերը:»:

***Հոդված 5.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև  մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստացված ապահովագրական հատուցումների նկատմամբ, բացառությամբ այն ապահովագրական հատուցումների, որոնց գծով հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջադրվել և սահմանված կարգով վճարվել են:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ **(Խ-298-26.09.2019, 11.11.2019-ՏՀ-011/1**) ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| Հ/Հ | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Աժ պատգամավոր Մանե Թանդիլյան | Նախագծի 1-ին հոդված. «***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4.1-ին կետով.<br><br>«4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու, իսկ ֆիզիկական անձը` ապահովադիր (այդ թվում, եթե գումարները բանկերի եւ վարկային | Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ կերպ. «***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ` օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br><br>«4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ֆիզիկական անձին կամ ուղղվում են ֆիզիկական անձի վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»: | Ընդունելի է: | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կազմակերպությունների կողմից անմիջապես ուղղվում են ֆիզիկական անձի վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր).»: | | | |
| 2. | Աժ պատգամավոր Մանե Թանդիլյան | Նախագծի 2-րդ հոդված.<br><br>«*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: | Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ.<br><br>*Հոդված 2.* Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 20-րդ կետով.<br><br>«20) բանկերի կամ վարկային կազմակերպությունների ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների<br><br>կողմից տրամադրվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց կամ ուղղվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»: | Ընդունելի է: | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | ԱԺ պատգամավոր Մանե Թանդիլյան | Նախագծի նոր՝ 3-րդ հոդված | Նախագծում ավելացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ.<br><br>*«Հոդված 3.* Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 15-րդ կետով.<br><br>«15) բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով վճարված (փոխանցված) գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու և եթե գումարները բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց կամ ուղղվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր.»: | Ընդունելի է: | Ընդունվել է |
| 4. | ԱԺ պատգամավոր Մանե Թանդիլյան | Նախագծի նոր՝ 4-րդ հոդված | Նախագծում ավելացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ.<br><br>«*Հոդված 4*. Օրենսգրքի 124-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br><br>«Հոդված 124. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները<br><br>1. Ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի, վարկային | Ընդունելի է: | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները, ինչպես նաև կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով կրած կորուստների չափով:<br><br>2. Ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների համար հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ապահովագրական և վերաապահովագրական հատուցումները, ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով կատարվող ծախսերը:»: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Աժ պատգամավոր Մանե Թանդիլյան | Նախագծի նոր՝ 5-րդ հոդված | Նախագծում ավելացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ.<br><br>***«Հոդված 5.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստացված ապահովագրական հատուցումների նկատմամբ, բացառությամբ այն ապահովագրական հատուցումների, որոնց գծով հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջադրվել և սահմանված կարգով վճարվել են: | Ընդունելի է: | Չի ընդունվել |